Հեղինակ ստորաբաժանում՝
15. Իրավաբանական վարչություն

**Հայաստանի Հանրապետության
տարածքում գործող բանկերին և
վարկային կազմակերպություններին**

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԻ և ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հարգելի տիկնայք և պարոնայք

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշմամբ հաստատված Կանոնակարգ 1-ի գլուխ 1-ի 4.2. կետի և ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի թիվ 194-Ն որոշմամբ հաստատված Կանոնակարգ 13-ի գլուխ 1-ի 6-րդ կետի համաձայն՝ ՀՀ տարածքում գործող բանկերը և վարկային կազմակերպությունները այսուհետ վերոհիշյալ կանոնակարգերով սահմանված փաստաթղթերը կարող են ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնել էլեկտրոնային տարբերակով Սի Բի Էյ Նետ էլեկտրոնային համակարգի՝ LICENSING էլեկտրոնային հասցեի միջոցով: Միևնույն ժամանակ հիշեցնում ենք՝ քանի որ ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների կանոնադրությունները հաստատվում են կենտրոնական բանկի կողմից, ուստի անհրաժեշտություն է առաջանում բանկերի և վարկային կազմակերպությունների կանոնադրությունները ՀՀ կենտրոնական բանկ բացի էլեկտրոնային տարբերակով ներկայացնելուց, ներկայացնել նաև թղթային տարբերակով:

Հարգանքով՝

Իրավաբանական վարչության պետի ժ/պ՝ Վազգեն Մնացականյան

Սույն գրության վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումներ ստանալու համար կարող եք դիմել Կենտրոնական բանկի Իրավաբանական վարչության լիցենզավորման ու գրանցման բաժին, հեռ. 59-29-80, 59-29-79, 59-29-81, 59-29-83, 59-29-86, 59-29-88